

Մաքսերի և առևտրի 1994 թ. գլխավոր համաձայնագրի XVII Հոդվածի մեկնաբանության մասին փոխհամաձայնություն

Անդամները,

Աշելով, որ XVII Հոդվածով Անդամների համար նախատեսվում են XVII Հոդվածի 1-ին կետում հիշատակված պետական առևտրային ընկերությունների գործունեությանն առնչվող պարտավորություններ, որոնք պետք է համապատասխան լինեն ՄԱԳ-Հ-1994-ով մասնավոր առևտրականների կողմից կատարվող ներմուծումների և արտահանումների վրա ազդող կառավարական միջոցների համար սահմանված ոչ խտրական մոտեցման ընդհանուր սկզբունքներին,

Աշելով այնուհետև, որ Անդամները ենթակա են, պետական առևտրային ընկերությունների վրա ազդող կառավարական միջոցների վերաբերյալ ՄԱԳ-Հ-1994-ի իրենց պարտավորություններին,

ընդունելով, որ սույն փոխհամաձայնությունը չի վնասում XVII Հոդվածում սահմանված կարևոր հիմնադրույթները,

սույնով համաձայնեցին հետևյալի մասին.

1. Պետական առևտրային ընկերությունների գործունեության թափանցիկությունն ապահովելու համար Անդամներն այդ ընկերությունների մասին, Ապրանքների առևտրի խորհրդին՝ 5-րդ կետի համաձայն ստեղծված աշխատանքային խմբի կողմից վերաքննելու համար, ծանուցում են ներքոնշյալ աշխատանքային սահմանման համաձայն.

«Պետական կամ ոչ-պետական ընկերությունները, ներառյալ՝ Շուկայավարման խորհուրդները, որոնց շնորհիվ են բացառիկ կամ հատուկ իրավունքներ կամ արտոնություններ, ներառյալ՝ օրինադրական կամ սահմանադրական լիազորությունները, որոնց կիրարկմամբ դրանք իրենց գնումներով կամ վաճառքով ազդում են ներմուծումների կամ արտահանումների մակարդակի կամ ուղղության վրա»:

Ծանուցման սույն պահանջը չի տարածվում արտադրանքների այն ներմուծումների վրա, որոնք նախատեսված են կառավարության կամ վերը հատկանշված ընկերության կողմից օգտագործման նպատակներով անմիջական կամ վերջնական սպառման համար և ոչ, այլ կերպ վերավաճառելու համար կամ վաճառելու նպատակ ունեցող ապրանքների արտադրության մեջ օգտագործելու համար:

2. Ապրանքների առևտրի խորհրդին պետական առևտրային ընկերությունների վերաբերյալ ծանուցումների ներկայացման առնչությամբ յուրաքանչյուր Անդամ անցկացնում է իր քաղաքականության վերաքննություն՝ հաշվի առնելով սույն Փոխհամաձայնության դրույթները: Այդպիսի վերաքննություն անցկացնելիս յուրաքանչյուր Անդամ պետք է հաշվի առնի իր ծանուցումներում հնարավոր առավելագույն թափանցիկություն ապահովելու անհրաժեշտությունն այնպես, որ թույլ տրվի հստակորեն գնահատել ծանուցված ընկերությունների գործելու եղանակները և նրանց գործունեության ազդեցությունը միջազգային առևտրի վրա:

3. Ծանուցումները կատարվում են համաձայն 1960թ. մայիսի 24-ին ընդունված պետական առևտրային գործունեության վերաբերյալ հարցաթերթի (BISD 9S/184-185)՝ հասկանալով, որ Անդամները պետք է ծանուցեն 1-ին կետում հիշատակված ընկերությունների մասին, անկախ այն բանից՝ փաստացիորեն ներմուծումներ կամ արտահանումներ կատարվել են, թե ոչ:

4. Յանկացած Անդամ, որը հիմքեր ունի համարելու, որ մեկ այլ Անդամ համապատասխանորեն չի կատարում իր ծանուցման պարտավորությունները, կարող է հարցը քննարկման դնել տվյալ Անդամի հետ: Եթե հարցը բավարար լուծում չի ստանում, ապա այն կարող է Ապրանքների առևտրի խորհրդին հակաժամուցում ներկայացնել 5-րդ կետի համաձայն ստեղծված աշխատանքային խմբի կողմից քննարկման համար՝ միաժամանակ տեղեկացնելով տվյալ Անդամին:

5. Ապրանքների առևտրի խորհրդի անունից ստեղծվում է աշխատանքային խումբ՝ վերաքննելու ծանուցումներն ու հակաժամուցումները: Այդ վերաքննության լուսի ներքո և առանց վնասելու XVII Հոդվածի 4«գ» կետը՝ Ապրանքների առևտրի խորհուրդը կարող է հանձնարարականներ տալ ծանուցումների համապատասխանության և հետագա տեղեկությունների անհրաժեշտության վերաբերյալ: Ստացված ծանուցումներից ելնելով աշխատանքային խումբը վերաքննում է նաև պետական առևտրային գործունեության վերաբերյալ վերոհիշյալ հարցաթերթի համապատասխանությունն ու 1-ին կետի համաձայն ծանուցված պետական առևտրային ընկերությունների ընդգրկումը: Այն նաև նկարագրական ցանկ է մշակում, որը ցույց է տալիս կառավարությունների ու ընկերությունների միջև հարաբերությունների ձևերը և այն գործունեության տեսակները, որոնցում ընդգրկված են այդ ընկերությունները, որոնք կարող են Հոդված XVII-ի նպատակներով առնչվել գործին: Հասկացվում է, որ Քարտուղարությունը աշխատանքային խմբի համար կապահովի ընդհանուր հիմնային փաստաթուղթ՝ պետական առևտրային ընկերությունների՝ միջազգային առևտրի հետ կապ ունեցող գործունեության վերաբերյալ: Աշխատանքային խմբին անդամությունը բաց է բոլոր Անդամների համար, որոնք հայտնում են դրանում ծառայելու իրենց ցանկության մասին: Այն ժողով է գումարում ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, և այդուհետև՝ տարեկան առնվազն մեկ անգամ: Այն տարեկան մեկ անգամ գեկույց է ներկայացնում Ապրանքների առևտրի խորհրդին¹:

¹ Այս աշխատանքային խմբի գործունեությունը համաձայնեցվում է 1994թ. ապրիլի 15-ին ընդունված Ծանուցման ընթացակարգերի մասին Նախարարական որոշման III Մասով սահմանված աշխատանքային խմբի գործունեության հետ: